



ՍՈՒՐԲ ՀԱԿՈՊ

Առաջնորդաւուս Մազր Ե Կեղեցի

Գրես Տփոյ
24 ՅՈՒՆԻՒ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ներքին Կեանիսի Կեղրոնը	Էջ 2

ԵՍԱՅԻ ՄԱՐԴԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ (2.5-11)

Եւարդ, ո՞վ տուն Յակոբի, եկուր Տիրոջ լոյսովը քալենք: Որովհետեւ ահա Տէրը լքեց իր ժողովուրդը, Յակոբի տունը, քանի որ անոնք փղշտացիներուն պէս ... եկուր իրենց երկիրը կախարդներով Տիրոջ լեցուցին առաջուան նման, լոյսովը իւ օտար ամուսնութիւններով լաւնածին զաւակներ ծնան: Իրենց երկիրը ոսկիով ու արծաթով լեցուեցաւ, թիւ չունին իրենց գանձերը. իրենց երկիրը ձիերով լեցուեցաւ, հաշիւ չունին իրենց ռազմակառքերը: Երկիրը ձեռագործ գարշելի չաստուածներով լեցուեցաւ. կ'երկրպագեն առարկաներու զորս իրենց մատներով շինեցին: Նուաստացաւ մարդ արարածը, ո՛րքան ստորնացաւ մարդը. մի՛ ներեր անոր, Տէ՛ր: Արդ, գացէք ժայռերու տակ ծածկուեցէք կամ ապաստանարանները մտէք, Տիրոջ ահարկու ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն փախչելու համար, երբոր անիկա գայ երկիրը հարուածելու: Որովհետեւ հիմա Տէրը իր բարձունքէն կը նայի մարդոց խեղճութեան վրայ. բայց այն օրը մարդոց ամբարտաւանութիւնը պիտի խոնարհի եւ միայն Տէրը ի՛նք պիտի բարձրանայ:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԵՆ
(9.30-10.4)

Նեթանոսներ, որոնք Աստուծոյ՝ արդարութեան չէին հետեւեր՝ հաւատացին. մինչդեռ հսրայէլի ժողովուրդը չարդարացաւ Մովսէսի Օրէնքին միջոցաւ, որ տրուած էր մարդիկը արդարացնելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ չհաւատաց Քրիստոսի, եւ կը կարծէր թէ Օրէնքին գործադրութեամբը պիտի արդարանայ: Ատիկա իսկ պատճառ եղաւ որ գլորին "գայթակղութեան առիթ հանդիսացող քար"ին վրայ, այսինքն՝ Քրիստոսի, որուն համար մարդարէութեան մէջ գրուած է. «Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ քար մը որ գլորումի առիթ պիտի ըլլայ, ժայռ մը՝ որ գայթակղութեան առիթ պիտի հանդիսանայ: Բայց անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»:

Եղբայրներ, սրտանց կը մաղթեմ եւ կ'աղօթեմ, որ Աստուծածփրկէ Յակոբի տունը, որովհետեւ կրնամ անոր մասին վկայել, թէ Աստուծոյ հանդէպ նախանձախնդիր է. միայն թէ այդ նախանձախնդրութիւնը

Հեքանոսներ, որոնք Աստուծոյ՝ արդարացներ՝ չէին հետեւեր՝ արդարացան, որովհետեւ Քրիստոսի հաւատացին. մինչդեռ հսրայէլի ժողովուրդը չարդարացաւ Մովսէսի Օրէնքին միջոցաւ, որ տրուած էր մարդիկը արդարացնելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ չհաւատաց Քրիստոսի, եւ կը կարծէր թէ Օրէնքին գործադրութեամբը պիտի արդարանայ: Ատիկա իսկ պատճառ եղաւ որ գլորին "գայթակղութեան առիթ հանդիսացող քար"ին վրայ, այսինքն՝ Քրիստոսի, որուն համար մարդարէութեան մէջ գրուած է. «Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ քար մը որ գլորումի առիթ պիտի չըլլայ, ժայռ մը՝ որ գայթակղութեան առիթ պիտի հանդիսանայ: Բայց անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»:

«Բայց անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»:

...Քրիստոսով
Օրէնքը իր
լրումին
հասած է
եւ միայն
Քրիստոսի
հաւատացողը
կ'արդարանայ:

Աստուծոյ արդարութեան ուղին: Մինչդեռ
Քրիստոսով Օրէնքը իր լրումին հասած
է եւ միայն Քրիստոսի հաւատացողը
կ'արդարանայ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԻՆ ԸՍ ՄԱՏԹԵՈՍԻ (13.24-30)

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ
անոնց եւ ըսաւ.
«Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին
մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած
էր, անոր թշնամին եկաւ, որոմ ցանեց
ցորենին մէջ եւ գնաց: Երբ սերմերը
աճեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն
որոմն ալ երեւցաւ: Տանտիրոջ ծառաները
եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն
լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ.
ուրկէ՞ հապա որոմը»: Ան պատասխանեց.

«Ասիկա թշնամիի գործ
Զգեցէք որ
երկումն
ալ միասին
անին մինչեւ
հունակի
ժամանակ...»:

արմատախիլ ընէք: Զգեցէք որ երկուքն ալ
միասին աճին մինչեւ հունձքի ժամանակ,
երբ հնձուրներուն կ'ըսեմ որ նախ որոմը
քաղեն, խուրձեր կազմեն այրելու համար,
եւ ապա քաղեն ցորենը եւ ամբարեն
շտեմարաններուս մէջ»:

«Ահաւասիկ ճիշդ ասոր կը նմանի
երկինքի արքայութիւնը»:

Հիմնուած չէ՛ Աստուծոյ
Ճշմարիտ ծանօթութեան
վրայ: Անիկա չհասկցաւ,
թէ Աստուծած ի՞նչ ձեւով
կ'ուզէր արդարացնել
մարդիկը. արդարա-
նալու իր հասկցած
ձեւին կառչեցաւ
եւ ուստի չընդունեց



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ Վորթքսեր ճէւբսիւն

Հեղինակ՝ ՀԵՆՐԻ ՆՈՒԲՆ

Թարգմանութիւն՝ ԿԱՐՈ ՍՐԿ. ՆՈԽՈՒՏԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Ով Տէր, կը փառաւորեմ Քեզ, կ'օրինեմ Քեզ,
կը պաշտեմ Քեզ: Յանախ աղօրքս կը վերածուի
ներգննիչ որոնաներու՝ առնչուող իմ իսկ
շուարած զգացումներուս եւ յուզումներուս: Յա-
նախ ինչզինքս կը գտնեմ եսատրտունչ աղօրք
արտասանելու ընթացքի մէջ, կամ ուշադրութիւնս
կը բափառի անհանդարտ մտքիս մէջ բնակող
մարդոց եւ եղելութիւններու վրայ: Ով Տէր,
ինչո՞ւ կը յամառիմ այսքան կեդրոնանալ զիս
ֆեզմէ բաժնող բաներու վրայ: Դուն աղրիւրն
ես ամէն բարուրեան, գեղեցկութեան ու սիրոյ:
Ողորումութիւնդ ցոյց տուիր՝ ինծի գալով եւ
զիս բարձրացնելով Եկեղեցիիդ կեանքին ընդ-
մէջէն՝ Քու իսկ կեանքիդ մէջ: Բայց տակաւին
կը շարունակեմ ապրիլ այնպէս որպէս թէ միտքս
խնողող հազար միւս բաները ուշադրութեանս
աւելի կը կարօսին:

Օգնէ՛ ինծի այս պայքարին մէջ, որպէսզի
Քեզ ներքին կեանքիս կեդրոնը դարձնեմ: Ինծի
աղօրելու շնորհը տուր: Յատակօրէն եւ համոզիչ
կերպով ցոյց տուր ինծի, թէ ինչպէս ինչզինքս
կը խաբեմ, եւ տուր ուժը այս ներըմբոնումին
հետեւելու: Ամենէն աւելի, ով Տէր, տուր ինծի
հասկնալ, որ մէջդ եւ միջոցաւդ բոլոր փոքր
մտահոգութիւններս պատասխան պիտի գտնեն:
Դուն չես արհամարհեր իմ նեղութիւններս, այլ
ինծմէ կը խնդրես վստահ ըլլալ, որ պիտի զբաղիս
անոնցմով, երբ ես պարզօրէն աչքերս վրադ ու
արքայութեանդ վրայ յառած պահեմ:

Ով Տէր, ինծի նամբաներդ սորվեցուր: Ամէն:
(Շարունակելլ 2)